# Գիտությունը՝ խոցելի, սակայն գերակա ոլորտ

## Հերթական նախաձեռնությունները պետք է նպաստեն գիտական մտքի հետագա զարգացմանը

Երեկ Ջերմուկի առաջին առողջարանում սկսվեց «Գիտության զարգացման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում» խորագրով գիտաժողովը: Այն կազմակերպվել էր ՀՀ կրթության եւ գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի եւ Երեւանի ճարտարապետության ու շինարարության պետական համալսարանի ջանքերով:

ԵրՃՇՊՀ ռեկտոր **Հովհաննես Թոքմաջյանը** նշեց, որ 1990-ական թվականների ճգնաժամային տարիներին գիտությունն ամենախոցելի ոլորտներից մեկն էր. *«ՀՀ-ում մտավոր ներուժը ամենալուրջ ռեսուրսներից է, ուստի մենք պետք է փորձենք գտնել այն ճանապարհը, որի միջոցով հայաստանի պետական այրերը գիտության զարգացման համար կկարողանան ստեղծել իրավական դաշտ»*: Նա ընդգծեց, որ անհրաժեշտություն է առաջացել քննարկել շուրջ երկու տարի գործող գիտության պետական կոմիտեի կատարած աշխատանքներն ու նախանշել նոր ուղղություններ:

Ողջունելով գիտաժողովի մասնակիցներին՝ ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար **Կարեն Հայրապետյանը** նշեց, որ *«90-ական թթ. ճգնաժամի պայմաններում, երբ խնդիր կար գիտական նվաճումները, գիտնականներին պահել երկրում, մշակվեց եւ ներդրվեց ֆինանսավորման նոր ձեւ՝ պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորում, որը, փրկեց գիտությունը»:*

Գիտական եւ գիտատեխնիկական գործունեության բազային, պայմանագրային, եւ նպատակային-ծրագրային ֆինանսավորման նոր կարգերի ընդունումը թույլ կտա ներդնել պետության կողմից հատկացվող միջոցների փոշիացումը կանխող մեխանիզմներ: Կ. Հայրապետյանն անդրադառնալով ֆինանսավորման կարգերին, նշեց. *«Բազային ֆինանսավորումը պետք է իրականացվի մրցութային կարգով, գիտակազմակերպչական եւ հիմնարար, կարեւորագույն կիրառական հետազոտական ծրագրեր իրականացնող գիտական կազմակերպությունները եւ գիտակրթական ենթակառուցվածքները պահպանելու եւ զարգացնելու, առանձին եզակի եւ կոլեկտիվ օգտագործման բնույթ ունեցող սարքավորումների ձեռքբերման նպատակով»:*

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավարն անդրադառնալով նաեւ մյուս կարգերին, ավելացրեց, որ պայմանագրային ֆինանսավորումը պետք է վերածվի իրական դրամաշնորհային համակարգի: Այս կարգի ֆինանսավորումը կոչված է ՀՀ գիտության եւ տեխնիկայի զարգացման գերակա ուղղությունների շրջանակներում ապահովելու առանձին հետաքրքրություն ներկայացնող, արդիական խնդիրների լուծումը, որոնք կարող են նպաստել նոր գիտական հետազոտությունների ստեղծմանը:

Պետական նպատակային-ծրագրային ֆինանսավորումը պետք է իրականացվի համապետական նշանակության ռազմավարական ծրագրերի շրջանակներում:

Ըստ Կ. Հայրապետյանի՝ դրամաշնորհային համակարգի ներդրման հետ կապված ամենակարեւոր սկզբունքը անկախ փորձաքննության համակարգի ձեւավորումն է. *«Մենք նախատեսել ենք, որ մինչեւ 2015-2016թթ. պետք է հասնենք այն համամասնությանը, որ գիտության ոլորտում պետբյուջեի ֆինանսավորման 50 տոկոսը լինի բազային, 30-35 տոկոսը՝ նպատակային, մնացածը՝ պայմանագրային ֆինանսավորումը»:*

*Թամարա ՄՈՒՐԱԴՅԱՆ*